

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՀԱՄԱԿԱՐԳԱԿԱՆ
ՆԱԿԱՆԱԳՐԱՆԷ ԳՐԱԳԱՐԱՆ

ԳՅԴ ԵՍԿ 07թ

«Ազգ եւ ժառանգություն»
Համահայկական
երիտասարդական
գիտաժողով



Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
Ստեփանակերտ
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն
ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն
ՀՀ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման
կենտրոն» ՊՈԱԿ
ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության պալատ

«Ազգ եւ ժառանգություն»
համահայկական
երիտասարդական
գիտաժողով

Սեպտեմբեր 26-30 2006 թ.
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
հռչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

Ս. Խանյան -բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
գիտության վաստակավոր գործիչ

Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ա. Մխիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր

Շ. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում զետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած
Համահայկական երիտասարդական գիտաժողովի զեկուցումները

Ու երկբարբառային ծայնավորը միավանկ է և մեկուկես վանկանի բառերում հատկապես խուլ, երբեմն նաեւ ծայնավոր հնչյունից հետո դառնում է *օ. ինչպես տուն>տօն (Տօն բար), դուռն>տօռնը (կայանց տօռնը), ճուտ>ճօտ (ճօտն բաղ), ջուխտ>ճօխտ (ճօխտ ճղը):*

Սուրբ>սօրի (Նըլբանդանց սօրի) բառում կատարվել է *ու>օ* հնչյունափոխություն:

Ու-ն քնայնացել է ջուր>ճըլր (խութին ճըլր) բառում:

Երկվանկ բառերի վերջին փակ վանկի *ու-ն* դառնում է *օ*, ինչպես *պտուկ>պըտօկ (Բլրծեն պըտօկ):*

Ու>ը

Մանրատեղանունների առաջին վանկի *ու-ն* հնչյունափոխվում է *ը-ի*

Ուլուբար - Ըլուբարանց դըլգ

ճում - ճըմօտն բաղ

ճուղուպուր - Պօժկա ճըղպօրէ

ճըլր - ճըրտափէր

Չայնավորների այս տարաբնույթ հնչյունափոխությունները փաստում են, որ մանրատեղանունները հայերենի հնչյունական համակարգի քննության խիստ արժեքավոր աղբյուր են:

Լուսինե Մարգարյան

«Մեսրոպ Մաշտոց» համալսարան

Գրականացման՝ որպես լեզվական իրողության արժեքը բանահյուսության մեջ

Հասարակական կյանքին ու կեցությանը համապատասխան փոխվում են հասարակական գիտակցությունն ու մտածողությունը: Լեզուն էլ, ծառայելով հասարակությանը որպես մտածողության ձև և նյութական դրսևորման միջոց, փոխվում ու զարգանում է հասարակական գիտակցության զարգացմանը զուգընթաց: Յուրաքանչյուր երեւոյթ թե պատմական, թե քաղաքական, թե հասարակական ու տնտեսական, դառնում է լեզվական իրողության առկայացման պայման, լեզվական իրացում ստանում և արտահայտվում լեզվի մեջ:

Գրականացումը՝ որպես լեզվական երեւոյթ, արժեվորվում է պատմական հիմքի վրա: Այն գրական լեզվի ազդեցությունն է բարբառի

վրա, որը լեզվական տարբեր մակարդակներում արտահայտվում է գրականից մուծված բառերով, քերականական մասնիկներով:

Գրական լեզուն, զոյակցելով բարբառների հետ, աստիճանաբար լուծում է դրանք: Այդ գործընթացն սկիզբ է առնում բարբառի զոյացման իսկ պահից և որոշակիանում բարբառի և գրական լեզվի պատմական սերտ զոյակցման պայմաններում: Բարբառը զոյացման իսկ պահից մշակման ու կանոնարկման է ենթարկվում: Այն իր ելակետում անզամ իդեալական մաքուր վիճակ չի ներկայացնում, քանի որ խոսվածքները, ենթախոսվածքները հստակորեն տարբերակել գործնականում զրեթե անհնար է: Խոսվածքների չտարբերակվածությունը աստիճանաբար բերում է խոսվածքների միօրինակացման: Դա էլ ենթադրում է կանոնարկում: Իսկ սա արդեն տանում է բարբառալուծման:

Այնպես որ, բարբառագոյացումն ու բարբառալուծումն իրար պայմանավորող և մեկը մյուսին փոխհաջորդող երեւոյթներ են: Այդ փոխհաջորդումն անմիջականորեն չի կատարվում, այլ ժամանակաշրջան որոշակի կտրվածքում:

Բարբառագոյացումը և բարբառալուծումը լեզվի օրինաչափ զարգացման արդյունք են: Եվ այն բոլոր գործոնները, որոնք պայմանավորում են լեզվի զարգացումը, բխում են լեզվի որպես հասարակական ու պատմական երեւոյթի էությունից: Գրականացումը լեզվական երեւոյթ է, բարբառային իրողություն, որը բարբառալուծման օրինաչափ գործընթացի օրինաչափ արդյունք է:

Գրականացման մուտքը բանահյուսություն, ապա և բարբառ կամ հակառակը տարբերայնորեն է եղել, բայց ժամանակի ընթացքում վերածվել է լեզվական իրողության, ձեռք բերել լեզվական արժեք և ընդգրկվել լեզվական բոլոր մակարդակներում: Լեզվական մակարդակներում գրականացման ընդգրկվածությունը տարբեր է: Հնչյունական և քառանկյան համակարգերում գրականացման գործընթացը վերածվել է գործուն օրինաչափության:

Բանահյուսական նմուշներում խոսվածքների տարբերակվածությունը, ոչ ճիշտ տառադարձությունը կամ պարզապես նրա չգոյությունը հանգեցնում են գրականացման, որն առաջին հերթին դրսևորվում է հնչյունական համակարգում: Բառական մակարդակում այն արտահայտվում է գրականից մուծված բառերով, որն ընդգրկում է նաև հնչյունական համակարգում դրսևորվող գրականացման տարրերը:

Քերականական կառույցներում գրականացումը շարունակում է կրել տարերային բնույթ, դեռևս ոչ օրինաչափ, բայց այն, որ երեւոյթն առկա է եւ որոշակի արժեք է ստանում, անվիճելի է: Այդ են փաստում թերեւս քերականական որոշ կաղապարներում գրականացված տարրի գերակայող գործածությունները, որոնք միտվում են օրինաչափության վերածվելու: Ինչպես, օրինակ, բացառական հոլովի *-ից* վերջավորութունը բարբառային *-ան* վերջավորության (իրերի համար), նըստա բառի (անձերի համար), գործիականի *ով-ը աւփի* փոխարեն:

Կամ բարբառում սովորական դարձած բաղադրյալ ստորոգյալի դիմավոր բայով արտահայտված բաղադրիչով (անորոշ դերբայի փոխարեն) գործածության դեպքերին զուգակցված գրականացված անորոշ դերբայ բաղադրիչով ձևերը:

Օրինակ *Մի աղջիկ ինձնում ա եղ բանը*, ուզում ա *եղ մարդուն* խաբել: - *Օգու՛մ ըմ մեռնի*, աստու՛ծ տանում չի:

Ինչպես արդեն նշել ենք, գրականացված տարրի առկայությունը բարբառի պատմական զարգացման արդյունք է, բարբառային մեկ այլ օրինաչափությունից բարբառայլուծման գործընթացից բխող լեզվական իրողություն:

Գրականացումը պայմանավորող այլ կարեւոր գործոններ են.

ա) Բանասացի կողմից նյութի հաղորդումը. լեզվական մշակման առաջին փուլը կապվում է բանասացի կողմից նյութի փոխադրման հետ: Բարբառակիր բանասացը նյութը պատմելիս գրական տարրեր է ներմուծում այն ավելի կիրթ ու գեղեցիկ հաղորդելու ակամա միտումնայնությամբ: (Այդ են վկայում բոլոր բանահավաքները): Օրինակներով ասվածը փաստել անհնար է. քանի որ բանասացի կողմից փոխադրված նմուշը որպես այդպիսին, չկա, այն վերափոխադրում է նաեւ բանահավաքը:

բ) Բանահավաքի կողմից նյութի վերափոխադրումը. բանահյուսական նմուշի վերամշակումը բանահավաքի կողմից է իրականացվում: Կարեւորելով բովանդակային կողմը, հարազատ մնալով ժողովրդական մտածողությանը յուրաքանչյուր բանահավաք կամա-ակամա իր լեզվի եւ ոճի միջոցով ներագրում է բարբառի վրա:

Որքան էլ որ բարբառի բառային համակարգը բոլոր բանահավաքների մոտ ընդհանրական է, այնուամենայնիվ, բառագործածության դրսեւորումներն անհատական են, քանի որ բանահավաքի բարբառի գործածության կարողությունները պայմանավորված են նրա անհատական մտածողությամբ:

Իհարկե, սա չի նշանակում, թե ժամանակային գործոնը դեր չունի գրականացման գործընթացում, այլ ընդգծում է բանահավաքի միջամտության կարեւոր գործոնը (եւ ոչ միայն այդ). որը տվյալ դեպքերում չի պայմանավորվում ժամանակով, այլ բանահավաքի բարբառիմացությամբ եւ շարադրանքի բովանդակային կողմը կարեւորելու առաջնահերթությամբ: Այդ է վկայում թերեւս նույն **բանահավաքի ստեղծագործություններում առկա միեւնույն բառի բարբառային ու գրական տարբերակային ձևերի առկայությունը:**

Նույնիսկ նույն բանահավաքի միեւնույն ստեղծագործության մեջ միեւնույն բառի բարբառային ու գրական զուգակցված ձևերի կարելի է հանդիպել:

Օրինակ էն հինջը՞ն ա

Թեվեր օնի թոչուն չի,

Պոզեր ունի եզըը չի:

Կամ *Մին ձկնորս էլ գործը պրծած օգու՛մ ա թա տոն քինի. եշում ա տեսնում մին սանդոդ ծովեն ճրերավը վլվլելի ընելավ կյամ ա . էս ծուկանեն էլ խոխա չընում:*

Գրականագործածության նման դեպքերը պայմանավորվում են բանահավաքի միջամտությամբ: Բանահավաքի միջամտության (տվյալ դեպքում՝ գրականացմամբ արտահայտված) չափը պայմանավորված է նաեւ ստեղծագործության ժանրային առանձնահատկությամբ:

Բանածեւային բանահյուսության մեջ բանահավաքի միջամտությունը նվազագույն չափով է դրսեւորվում: Առկա գրականացված տարրերն էլ հանգի, ճիթմի, չափի պահպանման միտումով են փոխառվում:

Քնարական ստեղծագործություններում, խաղիկներում գրականացումն արտահայտված է առավելագույն չափով. եվ սա պայմանավորված է նրանով, որ այդ ժանրի ստեղծագործությունները վերարտադրվում են շատ հաճախ բանահավաքների կողմից եւ դարձյալ հիմնականում հանգի, ճիթմի պահպանման միտումով:

Նորագիր խաղիկներում, չափածո ստեղծագործություններում զգալիորեն նվազել են բարբառագործածությունները:

Օրինակ

Չայեր, իրոք, կյանքը թանկ է,

Չայրենիքը միշտ անգին է,

Թուրքը մեր աղբյուրն ա քրքրում,

*Միահամուռ ոտքի ելեք:
Մի տարի էլ անց կացալ,
Թամամել ա իրեք տարին,
Քար են կտրել Մոսկվայում
Սեզ համար մի խորհուրդ չարին:*

Հեքիաթները գրականացվածության չափով զիջում են մյուս ժանրերի ստեղծագործություններին: Առկա տարրերն էլ պայմանավորված են դարձյալ բանահավաքի անհատական-խոսքային առանձնահատկությունների դրսևորմամբ:

Ըստ գրականացվածության չափի բանահյուսական նմուշները կարելի է խմբավորել.

ա) Բանահյուսական նմուշներ, որոնցում գրականագործությունները մեծ թիվ չեն կազմում, բայց զգալի են: Այդ խմբի մեջ կարող են միավորվել վաղ շրջանում գրառված եւ նորագիր բանահյուսական նմուշները:

բ) Բանահյուսական նմուշներ, որոնցում հեղինակային խոսքը գրական հայեցողով է, իսկ ժողովրդի խոսքը՝ ժողովրդական լեզվով՝ բարբառով, կամ էլ պարզապես միախառնված են գրականն ու բարբառայինը:

Այդ կարգի ստեղծագործությունները մեծ թիվ են կազմում: Առանձնապես վերջին շրջանում դրանք նկատելիորեն աճել են եւ երբեմն դուրս են գալիս բանահյուսական ստեղծագործությունների շրջանակներից վերածվելով գրական անհատական ստեղծագործությունների:

գ) Նմուշներ, որոնք գրառված են գրական հայերենով: Եվ դրանք գրականացված բանահյուսական նմուշներ համարելը հիմնավորվում է դրանցում առկա ժողովրդական մտածողությամբ:

Այսպիսով, թեպետ եւ բանահյուսական նմուշները ժողովրդական մտածողությամբ ընդհանուր մեկ ուսնակարգի մեջ միավորվեն, այնուամենայնիվ, փոխադրված յուրաքանչյուր նմուշ նաեւ բանահավաքի լեզվամտածողության արտահայտություն է: Գրականացումն էլ այդ արտահայտության բանահավաքի միջամտության լեզվական իրացումն է, նրա դրսևորման մի ձևը:

Ի հավսարկություն վերը նշված մեր փաստարկումների եւ օրինակների բանահավաքի միջամտությունը կարող է ոչ միայն խթանել, այլ նաեւ խոչընդոտել գրականացման գործընթացին: Սա այն դեպքում, երբ բանահավաքը բարբառագետ է: Տե՛սյալ դեպքում նա

հետամտորեն (եթե ոչ միտումնավոր) բացառում է գրական տարրի ներթափանցումը լեզու:

Այս երևույթը հակադրվում է գրականացմանը: Եվ եթե գրականացումը լեզվական երևույթ է օրինաչափության վերածվող, որպես բարբառի օրինաչափ գարգացման արդյունք, ապա «հակագրականացումը» արհեստականացված երևույթ է, ոչ օրինաչափ: «Արցախյան հանելուկներ» «Արցախյան ավանդույթներ» (ձեռագիր) ժողովածուները (բանահավաք բարբառագետ Ար. Սարգսյան) դրա փաստացի վկայությունն են: Այդ ժողովածուներում (վերջինում հատկապես, հնարավորինս ճշգրտված են խոսվածքների հնչյունաբանական ու ձևաբանական առանձնահատկությունները, որն իրապես արտացոլում է Ղարաբաղի բարբառի ներկայիս վիճակը որոշակի պայմանականությամբ. նկատելի է բարբառագետի բարբառը հնարավորինս մաքրությամբ ներկայացնելու մտահոգ միտումը:

Բանահավաքի միջամտության հետ է կապվում գրականացման գործընթացին խթանող մեկ այլ գործոն տառադարձությունը: Բարբառային ստեղծագործությունների լեզվաոճական առանձնահատկությունների պահպանման համար կարելի էր պայման է տառադարձությունը: Այդ մասին նշել ենք բանահյուսական նմուշների փոխադրության առանձնահատկությունները քննելիս: Բայց քննության այս շրջանակում գրականացման գործընթացում այն արժեքավորվում է եւ իր դերով ու նշանակությամբ որպես լեզվական եւ բարբառային իրողություն:

Տառադարձությամբ է պայմանավորված քմային եւ ոչ քմային հնչյունների տարբերակվածությունը:

Նուսվածքների համակարգվածության հնչյունաբանական եւ ձևաբանական առանձնահատկությունների հստակեցման ու ճշգրտման խնդրում այն կարելի էր պայման է, որի չզոյությունը էականորեն ազդում է գրականացման գործընթացին:

Տառադարձությունը որպես գիտական իրողություն, առաջին անգամ կարելի է շրջապատվել (1911թ.) այն ժամանակ, երբ արդեն բանահյուսական նյութերի գրառումը շուրջ մեկուկարյա պատմություն ուներ: Առայսօր նույնիսկ չկա ընդհանուր բարբառային գիտականորեն հիմնավորված տառադարձական այբուբեն: Բնականաբար նույն տառադարձական այբուբենը կիրառելի չէ տարբեր բարբառների համար: Բացի այդ, բանասացի կամ բանահավաքի կողմից նմուշը փոխարինելիս եթե անգամ խոսվածքների հնչյունական ու

ձեւաբանական առանձնահատկությունները պահպանվեին, դրանք նույնությամբ վերափոխադրելը տեխնիկապես էլ միշտ չէր հնարավոր:

Գրականացմանը խթանող գործոն է նաեւ բանասացի կամ բանահավաքի բարբառի ոչ լավ իմացությունը, ինչն էլ պատճառաբանվում է նրանով, որ առայսօր Ղարաբաղի բարբառի մանրամասն ուսումնասիրությունը Կ. Ղավթյանի «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» լեզվաբանական աշխատությունն է, որտեղ խոսվածքների հնչյունական ու ձեւաբանական առանձնահատկությունները ճշգրտված ու հստակեցված են: Իսկ այդ աշխատությունը լույս է տեսել 1966թ.: բանահյուսական նյութերի գրառման պատմության սկզբնավորումից մեկ դար հետո: Բացի այդ, բարբառը լեզվական անփոփոխ վիճակ չէ: Եվ բնականաբար հետայս կեսդարյա ժամանակաշրջանում այն զգալի տեղաշարժեր է ունեցել, որոնք տեսականորեն դեռ չեն վավերացվել:

Գրականության հետ է կապվում վերջին շրջանում նկատվող եւս մեկ երեւոյթ: Եվ բանահյուսական նորագիր նմուշներում, եւ խոսակցական լեզվում նկատելի է օտար, փոխառյալ բառերի միտումնավոր փոխադրություն մայրենիով գրական հայերենով: Այդ երեւոյթը գրականացում համարելը եւ առարկելի է, եւ հիմնավորված: Առարկելի, որովհետեւ մենք գրաբարից ավանդված ունեինք մայրենի ձեւերը, պարզապես պատմաքաղաքական գործոններով պայմանավորված, մայրենի ձեւերին գուգակցվել են նաեւ փոխառյալ, օտար ձեւերը, որոնց գործածության շրջանակները երբեմն ծավալվել են այնքան, որ արտանդել են մայրենի գործածությունները: Եվ այսօր դրանց վերագործածությունը օրինաչափ է եւ բացատրվում է դարձյալ պատմական գործոնով: Մյուս կողմից ակներեւ է գրականացման միտման մղումը, որովհետեւ բանասացը, ինչպես նաեւ բանահավաքը, կամա-ակամա փոխադրում են օտար-բարբառայինը մայրենի գրականի: Եվ այդ ակամա միտումնայնությունը, թեպետ եւ լինի մայրենի ձեւերի վերագործածություն, մղում է գրականացման: Մ. Արեղյանը գրում է. «ժողովրդական առօրյա խոսակցության համար նույնանիշ բառերն ավելորդ ծանրաբեռնվածություն են. որովհետեւ այդ ժամանակ լեզուն բանեցնում ենք մեր մտքերը պարզապես ուրիշներին հաղորդելու համար... Այդ պատճառով, եթե մի կողմից նույնանիշ բառեր են առաջ գալիս, մյուս կողմից էլ բարբառերը ձգտում են այդ անօգուտ առատությունը թորափելու:

Գրականից փոխառված բառերը բարբառային միջավայրում «մաքուր» չեն մնում, կրում են բարբառի ազդեցությունը, որով էլ արտահայտվում է գրական միավորի գրականացվածության աստիճանը:

Ըստ այդմ գրականից մուծված միավորները կարելի է խմբավորել ըստ գրականացվածության ընդգրկման աստիճանի:

ա) Երբ գրական միավորը փոխառվում է իր ձեւաբովանդակային լրիվ ընդգրկմամբ եւ իր գործածության ոլորտով:

բ) Երբ փոխառված գրական տարրը բարբառացվում է, այսինքն բարբառածեւ, գրականիմաստ:

գ) Երբ գործածության ոլորտն ընդգրկում է միայն բարբառային միջավայրը, այսինքն բարբառիմաստ, գրականածեւ:

Այսպիսով, գրականացումը լեզվական երեւոյթ է, եւ այն պայմանավորող հիմնական գործոնը լեզվականն է, այն է գրականացումը լեզվական իրողության բարբառի օրինաչափ զարգացման ծնունդ եւ արդյունք է: Մյուս բոլոր գործոնները պատճառաբանվում եւ անցնում են վերոնշյալից:

Արինա Բալասանյան

Ար 77

Պատմության ծայրը

(հայրենասիրության գաղափարը Ն. Ջարյանի «Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգության մեջ)

Ռուս մեծանուն քննադատ Վ. Գ. Բելինսկին գրել է. «Սենք դիմում ու հարցաքննում ենք անցյալին, որպեսզի այն մեզ բացատրի մեր ներկան եւ ակնարկի մեր ապագայի մասին»: (Բելինսկի, երկեր, հ. 10, էջ 388): Դեղափոխական դեմոկրատի այս կարծիքը կիսել են նաեւ հայոց մեծերը՝ Րաֆֆին, Զովի. Թումանյանը, Մուրացանը, եւ բոլոր նրանք, ովքեր անդրադարձել են մեր ժողովրդի պատմությանը՝ ժամանակակից այրող հարցերը արծարծելու համար: Բելինսկու այդ խորհրդին մեկ անգամ չի անդրադարձել նաեւ տաղանդավոր գրող Ն. Ջարյանը: Դեռեւս 1940 թվականին նա տպագրեց »Արչակ եւ Շապուհ« չափածո վիպերգը՝ 5-րդ դարի մատենագիր Փավստոս Բյուզանդի «Պատմություն Հայոց» գրքի մոտիվներով: Հայրենական մեծ պատերազմի հենց սկզբից Ջարյանը ընթերցողներին հանձնեց իր

Ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ
*Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի փող., 21,
հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,*

